մի ուրիշ պատերազմ էր ուղարկված։ Մերձաւոր մի գիւղում հայերի և մահմետականների միջև ընդհարում էր սպասւում, և այդ պատերազմը որոշ ժամանակից յետոյ վերադարձաւ ու յայտնեց, որ մահմետականները դուրս են եկել պատերազմեան առջև, խլել են նրանցից հրացաններն և ուրիշ զէնքերը։ Այս ամենը կատարւեց մեր ներկայութեամբ, ձեր պատերազմեան աչքի առջև, և կարելի է թւել շատ դէպքեր, երբ հայ գիւղացիները սպանել են թուրքերին և, ընդհակառակը, թուրքերը սպանել են հայերին։ Միւս կողմից տեղի են ունենում մասնաւոր ընդհարումներ ու սպանութիւններ։ Ահա այսպիսի հանդամանքներում, երբ ոչ միայն ազատ հաղորդակցութիւն չկայ երկաթուղիներով, այլ և փակւած է երթեւեկը գիւղերի միջև — ա՛յս դրութեան մէջ հայկական զօրքերի կոմիսար Դրօն յայտարարեց,որ բոլոր ռազմագիտական ճանապարհները փակւած են հայկական զօրամասերի առջև։ Նա վճռական ու յամառ կերպով պահանջում էր, որ իրեն ցոյց տրւի որև է ճանապարհ, թէկուզ շատ վատ ու անյարմար, թէկուզ ամենաանանցանելի մի ճանապարհ։ Այդ պահանջին նրան պատասխանւեց, որ ռազմագիտական բոլոր ճանապարհները փակւած են ռազմաճակատ գնացող հայ զօրամասերի առջև։ Մահմետականների ներկայացուցիչները չառարկեցին»։

«Երբ մի կողմից, գիւղերում, կանգնած են կանոնաւոր զնդեր ու գումարտակներ, իսկ միւս կողմից կանգնած են զինւած անկազմակերպ մահմետական զանգւածները, —ստեղծւում է այնպիսի յաղեցած մթնոլորտ, որ ամենաաննչան առիթն իսկ բաւական է, որպէսզի բռնկւի ազգային հրդեհը։ Եւ ահա այդ ազգային հրդեհը տեղի ունեցաւ փետր. 17—21-ին։ Եթէ դուք նայէք Ղամարլու մեծ գիւղի վրա, որի բնակիչները բաղկացած են մահմետականներից ու հայերից, կը տեսնէք, որ այդ գիւղի մահմետական մասը չկայ, անհետացել է. չէք գտնի նրան, գոյութիւն չունի, բնաջնջւած է. իսկ հայկական մասը կանգուն է, չի վնասւել։ Եթէ առնէք մի ուրիշ գիւղ՝ Աղհամզալուն, այդ գիւղում էլ բնակիչ չկայ. հեռացել, թաղնւել են, մի մասն էլ գուցէ, բնաջնջւած է։ Ուլուխանլուն, աւելի մեծ ու հարուստ մի գիւղ, նոյնպէս դատարկւած է։ Դաւալու գիւղից մահմետական բնակչութիւնը, տեսնելով յուսահատական վիճակը, հեռացել է յոժարակամ, յայտնի չէ թէ ուր։ Այսպիսի դրութեան մէջ են հայերի ասելով 18, իսկ մահմետականների տեղեկութիւններով 21 գիւղեր։ Ամենացաւալին այն է, որ գիւղերի մաքրագործումը, այս, եթէ կարելի է ասել, գիւղերի ջարդ ու փչուր անելը կատարւել է մասնակցութեամբ հայկական կանոնաւոր զօրամասերի, որոնք այս հրդեհի ժամանակ օգնութեան են կանչւած Երեւանից և, փոխանակ օգնելու, իրենք էլ մասնակցել են այդ հրդեհին՝ գործի մէջ մտցնելով զնդացիրներ ու հրետանիներ։ Երևան քաղաքի դէպքերը արձագանգ եղան Դաւալուի դէպքերի։ Երևանում սկսւել է հրացանաձգութիւն ու կոտորած։ Հետևանքը՝ 36 մահմետական զերեզման և 56՝ հայկական... Հայ ու մահմետական խանութները բոլորովին ջարդւած ու թալանւած են և եթէ չլինէին մի քանի հասարակական գործիչներ մահմետականների ու հայերի կողմից, Երեւանում ահաւոր ջարդ ու կոտորած տեղի կունենար։ Բայց, ինչպէս վկայեց պատերազմը հայ ու մահմետական ներկայացուցիչների առջև Երեւանում, շնորհիւ Դրօի, Արամ փաշայի և Երեւանի պարետ Շահխաթունիի եռանդուն միջամտութեան, կոտորածը լայն ծաւալ չի ստացել։ Նրանք ամբողջ օր շրջում էին քաղաքում, հանդարտեցնում թշնամի կողմերը և, վերջ ի վերջոյ, փակեցին այդ դժբախտ դէպքը»։

Այս զեկուցումը մի ամբողջ փոթորիկ առաջ բերեց Սէյմում, յատկապէս, մահմետական պատգամաւորների կողմից։ Նրանք իրար յետեւից